ՄԻՋԻՆ ԽԱՎԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՅՈՒ. Գ.

Ժամանակն է քննարկելու հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների և տարբեր մակարդակի պաշտոնյաների կողմից պարբերաբար հնչեցվող՝ «Հայաստանում միջին խավ չկա» դատողության արժանահավատությունը: Ի՞նչն է հիմք ծառայում նման պնդման համար՝ պետական վիճակագրական առկա տվյալնե՞րը, թե՞ մասնավոր դիտարկումները:

Անդրադառնանք պաշտոնական վիճակագրությանը: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով ՀՀ համախառն ներքին արդյունքը 2011 թ. հունվար-մարտ ժամանակահատվածում շուկայական գներով հավասար է 615903.2 մլն դրամի, որը 2010 թ. նույն ժամանակահատվածի 101.2%-ն է: Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը կայուն աճում է. եթե 2010 թ. այն 101704 դրամ էր, ապա 2011 թ. օգոստոսին՝ 110700: 7 տարվա ընթացքում (2005-2011) 2.5 անգամ աճել է նաև սահմանված նվազագույն աշխատավարձի չափը՝ 2011 թ. դառնալով 32500 դրամ:

Աղյուսակ 1

Աշխատավարձի միջին և նվազագույն
չափերի դինամիկան ՀՀ-ում 2005-2011 թթ. (ՀՀ դրամով)[1]

Թվականը	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը (իրական)	51750	60537	71099	80189	92862	101704[2]	110700[3]
Աշխատավարձի սահմանված նվազագույն չափը	13000	15000	20000	25000	30000	30000	32500

Իսկ բարեկեցության մակարդակի անհավասարությունը չափող քվինտիլային խմբերի առանձնացման եղանակը վկայում է այն մասին, որ հասարակության մեջ եկամուտների բաշխման կառուցվածքը բավական կայուն է, թեև Ջինիի գործակիցը 5 տարիների ընթացքում աճել է:

[1] http://www.armstat.am/file/doc/99461558.pdf (25.09.2011, 14:43)
[2] http://7or.am/archives/22065 (25.09.2011, 16:47)
[3] http://www.b24.am/economy/33525.html (25.09.2011, 20:21)

Աղյուսակ 2

Բնակչության դրամական
եկամուտների բաշխումը՝ ըստ քվինտիլային խմբերի[4]

Թվականը	2005	2006	2007	2008	2009
Դրամական եկամուտները	100%	100%	100%	100%	100%
այդ թվում՝ ըստ 20%-անոց խմբի բնակչության					
Առաջին խումբ (առավել քիչ եկամուտներով)	6%	8%	7%	7%	8%
Երկրորդ խումբ	13%	12%	13%	14%	13%
Երրորդ խումբ	17%	16%	17%	17%	17%
Չորրորդ խումբ	23%	22%	24%	24%	22%
Հինգերորդ (առավել շատ եկամուտներով)	41%	42%	38%	39%	40%
Ջինիի գործակից	0.359	0.369	0.371	0.389	0.382

Ինչպես վկայում են աղյուսակ 2-ի տվյալները, տնտեսական, իսկ ավելի հստակ՝ եկամուտների առումով հասարակության մեջտեղում հայտնված 20%-անոց խմբի ձեռքին կայուն կերպով պահպանվում է ՀՀ բնակչության դրամական եկամուտների 17%-ը:

Այսպիսով, կենսամակարդակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալների անգամ թռուցիկ ուսումնասիրությունը արդեն իսկ հերքում է Հայաստանում միջին խավի բացակայության վերաբերյալ շրջանառվող կարծիքը:

Իհարկե, կարելի է կասկածի տակ առնել պաշտոնական վիճակագրության տվյալները՝ վկայակոչելով այն հայտնի փաստը, որ ՀՀ պետական վիճակագրական ծառայության հաշվարկների համար հիմք են միայն պաշտոնական տվյալները, այն է՝ գրանցված եկամուտները, իսկ ստվերային եկամուտները չեն հաշվարկվում: Այդ իսկ պատճառով անդրադառնանք մեր հասարակության վերաբերյալ առօրյա դիտարկումներին: Դրանց մի մասը հիմնվում է սեփական սոցիալական ապահովվածության վիճակով բավարարվածության կամ անբավարարության

[4] http://www.armstat.am/file/doc/99461558.pdf , էջ 107 (02.11.2011, 20:02)

սուբյեկտիվ չափանիշի վրա, իսկ մյուս մասը՝ արտերկրում կյանքի որակի և մակարդակի հետ համեմատությունների վրա:

Հետաքրքրական է, որ «Հայաստանում միջին խավ չկա» կար- ծիքը հնչեցնողները այն հարցին, թե որ խավին են պատկանում իրենք, առանց վերապահումների տալիս են հետևյալ պատասխանը. «Ես միջին խավի ներկայացուցիչ եմ, սակայն Հայաստանում միջին խավ չկա»: Այդուհանդերձ, սեփական գոյությունը համառորեն ժխտելու միտումը միանգամայն բացատրելի է: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, որը նաև հանգեցնում է հակասական տեղեկատվության հսկայական ծավալների գրեթե անվերահսկելի տարածման, հանգեցնում է համընդհանուր անվստահության մթնոլորտի ձևավորման: Վերջինիս բաղադրիչ և միաժամանակ հետևանք է սեփական ապագայի հանդեպ անվստահությունը: Այդ անվստահության հիմքում ընկած են կործանարար տարերային աղետների թվի աճը, տնտեսական ճգնաժամերը և այլն: Հատկա- նշական է, որ նման միտումները բնորոշ են ոչ միայն Հայաստանի հասարակությանը, այլև եվրոպական զարգացած տնտեսություն և սոցիալական պաշտպանության բարձր մակարդակ ունեցող երկրներին[5]: Միջին խավն ամենուրեք կորցնում է իր դասական բնութագրերից մեկը՝ ապագայի հանդեպ վստահությունը, հետևաբար նաև կայունության զգացումն ու առկա քաղաքական և տնտեսական համակարգի հանդեպ վստահությունը: Մոլորեցնում է նաև «միջին խավ» հասկացության տեսական սահմանման բացակայությունը. դրա հետևանքով միջին խավը նույնացվում է արևմտյան հասարակության որոշակի սոցիալական շերտերի հետ՝ իրենց հատուկ արժեհամակարգով և սպառողական առանձնահատկություններով, որոնց բարեկեցությունը առաջին հերթին պայմանավորված է ազատ շուկայի արդյունավետությամբ: Նման մերժողական դիրքորոշման համար ևս մեկ պատճառ է հասարակության մեջ միասնական արժե- համակարգի և գաղափարախոսության բացակայությունը: Միջին խավն ի սկզբանե պետության մեջ բաղկացած է երկու հիմնական գործառութային հատվածներից: Մեկն ապահովում է պետության և հասարակության հիմնական կազմակերպչական կառույցները (չինովնիկներ, հոգևորականներ, զինվորականներ և այլն), որոնք չու- նեն առևտրային նպատակներ: Մյուս հատվածը, ընդհակառակը, իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն՝ արտադրություն, առևտուր և այլն: Նման բաժանումը՝ «հասարակության և օրենքի ծառաներ» և «սեփական շահի ջատագովներ», հանգեցրել է արժեքային դիխոտոմիայի, ավանդական արժեքների (կոլեկտիվիզմ, հայրենասիրություն, բարոյականություն և այլն) և մոդեռնիզմի (անհատականություն, հակաշթաթիզմ, իմմորալիզմ և այլն) միջև պայքարի[6]: Խորհրդային Միության փլուզումից հետո հասարակության անոմիկ վիճակը դեռևս

---

[5] *Dominik H. Ernst/ Vera Erdmann/ Tatjana Kleineberg, Mythen über die mittelschicht. Wie schlecht steht es wirklich um die gesellschaftliche Mitte? Roman Herzog Institut # 9 e. V., 2011.*

[6] **Степанова О. К.** *"Средний класс" как модель социальной идентификации в постсоветской России, М., 1999.*

չի հաղթահարվել. հին արժեհամակարգը այլևս չի արդարացնում իրեն, հասարակական ամբողջ համակարգն ապրում է ազատական արժեքների համաձայն, զարգացնելով շուկայական հարաբերություններ, սակայն ավագ սերնդի ներկայացուցիչները, որ դաստիարակվել են խորհրդային գաղափարախոսության ներքո, դեռևս ի վիճակի չեն փոխելու գաղափարախոսությունը՝ ընդունելով ազատական արժեքներ: Դրան զուգահեռ՝ հին արժեքներն այլևս իրենց չեն արդարացնում, կիրառելի չեն, և հին սերունդը դրանցից հրաժարվել է. սա վկայում է՝ հասարակության մեջ չկա հին արժեքների կրող ու տարածող: Սակայն հասարակությունը զարգանում է, փոխվում են նրա գործառնության սկզբունքները, և հասարակությունը չի կարող սպասել նոր արժեքների արմատավորմանը մեզանում: Դրա հետևանքով ձևավորված միջին խավը չունի համապատասխան միասնական մշակութային նկարագիր՝ արժեհամակարգ, սոցիալական և քաղաքական դիրքորոշում, ինչպես նաև հասարակության մեջ սեփական դերի գիտակցում: Միջին խավը, ունենալով հասարակության կառուցվածքի մեջ էական տեսակարար կշիռ և կատարելով միջին խավին վերագրվող հիմնական սոցիալական գործառույթները, դեռևս համախմբված չէ՝ ներկայացնելու իր քաղաքական և սոցիալական պատվերը պետությանը և հասարակությանը: Իսկ հասարակության մեջ միասնական գաղափարախոսության բացակայությունը իր հերթին հանգեցրեց նրան, որ ոչ մի սոցիալական մարմին չի զբաղվում միջին խավի կերպարի, սոցիալ-տնտեսական և մշակութային նկարագրի ուսումնասիրությամբ և ձևավորմամբ:

Անշուշտ, վերը նշված բոլոր նկատառումները ուշադրության արժանի են, սակայն անհրաժեշտ է խորությամբ ուսումնասիրել հայ հասարակության շերտավորման արդի իրականությունը: Իսկ իրականությունը հետևյալն է: Մեր հասարակության մեջ արդեն ձևավորվել է հսկայական՝ հասարակության 62%-ը կազմող միջին խավ[7]: Միջին խավի գոյությունը սոցիալական անհրաժեշտություն է, եթե ուզում եք՝ սոցիալական կարիք: Եվ այդ կարիքը բավարարվում է մեր հասարակության մեջ, սակայն անվերահսկելի, չկազմակերպված և տարերային: Տնտեսական ցուցիչների, ապրելակերպի և հասարակության մեջ կատարվող այլ դերերի տեսանկյունից միջին խավը միանգամայն ամուր դիրքեր է գրավել մեր հասարակության մեջ:

Ընդ որում, միջին խավի ձևավորման տնտեսական ուղիները Հայաստանում միանգամայն յուրահատուկ են: Առաջին՝ միջին խավը ձևավորվում է որպես մեծահարուստների, մասնավորապես օլիգարխների տնտեսական գործունեության հետևանք՝ իրենց տնտեսական դիրքերի կայունացման պահանջի շնորհիվ: Ունենալով հսկայական տնտեսական կապիտալ՝ տվյալ անհատները ձգտում են

[7] Ըստ հեղինակի՝ 2011 թ. փետրվարին իրականացված զանգվածային հեռախոսային հարցման տվյալների:

այն պահպանել և ավելացնել, որի համար հույժ անհրաժեշտ են արհեստավարժ կադրեր, որոնք համապատասխանաբար վճարվում են: Մեծահարուստները, սեփական բիզնեսի զարգացման անհրաժեշտությունից ելնելով, նպաստում են մասնագետների խավի աշխատավարձերի բարձրացմանը, որի շնորհիվ վերջիններս ապահովված են աշխատանքով, եկամտով և միջին խավին համապատասխան ապրելակերպով, անընդհատ աճող պահանջմունքներով, ինչպես նաև ներկայիս տնտեսական և քաղաքական համակարգի պահպանման ձգտմամբ, թեև էքսպլիցիտ քննադատական դիրք են զբաղեցնում:

Երկրորդ՝ միջազգային կազմակերպությունները հսկայական միջոցներ են ներմուծում Հայաստան, որոնց մի մասն ուղղվում է դարձյալ մասնագետների վարձատրությանը և միջին խավին համապատասխան կենսամակարդակի և ապրելակերպի ապահովմանը:

Երրորդ ուղին՝ թեև շատ խնդրահարույց է, սակայն միանշանակ առկա է և զգալի մասնաբաժին է կազմում: Դա արտագնա աշխատանքն է: Կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք տարիներ շարունակ սեզոնային բաժանության մեջ են ապրում սեփական գոյությունը և կենսամակարդակը պահպանելու համար: Համայնքային մակարդակում այդ ընտանիքները առավել ապահովվածներն են՝ արտերկրից անվերահսկելիորեն ներկրվող միջոցների հաշվին:

Չորրորդ՝ Հայաստանի պետական ապարատի պաշտոնյաներն են, որոնք կատարում են շատ կարևոր գործառույթ՝ ուղղված տնտեսության զարգացման խթանմանը և ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավմանը, իսկ նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ է լուրջ մասնագիտական բյուրոկրատական համակարգի ստեղծում: Անշուշտ, հարկ է նշել, որ այս խմբի ներկայացուցիչները դեռևս բավարար չափով չեն վարձատրվում, սակայն ունեն այլընտրանքային եկամտի հնարավորություններ միջին խավին համապատասխան ապրելակերպ և մակարդակ ապահովելու համար:

Միջին խավի առկայության, կայացման և զարգացման մասին վկայում են նաև այլ գործոններ: Առանց մեծածավալ միջին խավի առկայության Հայաստանում հնարավոր չէին լինի նման քանակի բանկերի գործառնումը և բանկային համակարգի զարգացումը, ինչպես նաև վարկային և ապահովագրական ծառայությունների ծավալի աճն ու զարգացումը: Առանց վճարունակ միջին խավի հնարավոր չէր լինի միջազգային ճանաչում ունեցող միջին խավը սպասարկող բրենդային խանութների (Promod, Mango, Mexx, Motivi, Giordano և այլն) ներխուժումը և գործառնումը հայաստանյան շուկայում, ինչպես նաև մրցակցող սուպերմարկետների հսկայական ցանցերի գոյությունը՝ առանց միջին խավին բնորոշ սպառողական վարքի և սպառման ծավալների: Ծավալուն միջին խավ ունեցող հասարակության մեկ այլ բնորոշ գործոն են նաև հանրային սննդի համակարգի զարգացվածությունը և ծավալները: Այն է՝ սրճարաններ, ռեստորաններ, գարեջրատներ… Բացի այդ, Հայատանում օրեցօր աճում է նաև զբոսաշրջային

ծառայություններ մատուցող գործակալությունների թիվը, որոնց առաջարկած ծառայությունների և ճամփորդությունների ցանկը անընդմեջ ավելանում է:

Միջին խավի կայացման ևս մեկ երաշխիք է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, որոնք նոր տիպի բարեկեցության հիմք են՝ ավանդական միջին խավը համալրելով նոր պայմաններում ձևավորվող մասնագետներով:

Այսպես թե այնպես հետխորհրդային Հայաստանում գերնպատակ էր մտավորականության հիմքի վրա ձևավորել միջին խավ, որի կենսամակարդակը համեմատելի կլինի եվրոպական միջին խավի կենսամակարդակին:

Տեսական և փորձնական մակարդակներում ապացուցված է, որ անձի սոցիալական նույնացումը սոցիալականացման ընթացքում ձևավորվում է սեփական ես-ը որոշակի սոցիալական խմբին դասելու գործընթացում: Իսկ վարքագծի և ապրելաոճի ձևավորումը իրականացվում է՝ իրական կամ երևակայական նորմերի և արժեքների վրա կողմնորոշվելով: Իսկ Հայաստանի ապագան մեծապես կախված է նրանից, թե սոցիալական շերտավորման ինչպիսի կառուցվածք հնարավոր կլինի սերմնավորել հասարակական գիտակցության մեջ և ամրապնդել ինստիտուցիոնալ մակարդակում:

Միջին խավի ձևավորումը սոցիալական անհրաժեշտություն է, և գործառութային հասարակական կառուցվածքը լրացնում է այդ բացը: Վերջին տարիների ազատական փոփոխությունների պայմաններում սոցիալ-կառուցվածքային նույնականացման փոխակերպում-ների ուսումնասիրությունը անհրաժեշտ է ներկայիս մասնատված (фрагментированный) սոցիալական կառուցվածքի զարգացման ուղղության որոշման, ինչպես նաև հասարակության որոշակի խմբերի սոցիալական կողմնորոշման և ստեղծարար ներուժի որոշման համար: Նման դեր կարող է ստանձնել բարձրագույն կրթությամբ մասնագետների և այն անընդմեջ լրացնող ուսանողների խավը, որին Դ. Բելլը շատ դիպուկ անվանում է կոգնիտարիատ ("knowledge worker")[8]: Այս խավը, ի տարբերություն պրոլետարիատի, չի արտադրում նյութական արժեքներ, սակայն խիստ պահանջված է ժամանակակից շուկայում: Իսկ հայկական իրականության մեջ, հաշվի առնելով սահմանափակ արտադրական ծավալները և հնարավորությունները, այս խավը կարող է դառնալ համապատասխան արժեհամակարգի կրող և տարածող համապատասխան կազմակերպված ազդեցության դեպքում՝ հիմնվելով Ս. Հանգթինգթոնի «ազգային ոգի և արևմտյան տեխնիկա»՝ փոխակերպվող հասարակութ-յունների կայուն զարգացման բանաձևի վրա[9]:

ВОПРОС СУЩЕСТВОВАНИЯ СРЕДНЕГО СЛОЯ В АРМЕНИИ

МЕЛКУМЯН Ю. Г.

Резюме

Настало время всерьез задуматься над правомерностью высказываемого представителями разных слоев общества и чиновниками различного уровня

---

[8] **Daniel Bell.** *The coming of post-industrial society: a venture in social forecasting, N. Y., 1976.*

[9] **Хангтингтон С.** *Столкновение цивилизаций и изменение мирового порядка* (Pro et Contra, *т. 2 (N 2), М., 1997, с. 125-126.*

суждения о том, что “в Армении нет среднего слоя”. Повсюду в мире средний класс утрачивает одну из своих классических характеристик – уверенность в завтрашнем дне. Еще одной причиной подобной позиции отрицания является отсутствие в обществе единой системы ценностей и идеологии. После развала Советского Союза аномичное состояние общества все еще не преодолено. В итоге сформировавшийся средний класс не обладает соответствущими культурными характеристиками: системой ценностей, социальной и политической позицией, а также осознанием своей роли в обществе. Средний класс, будучи представленным в обществе и имея существенный “удельный вес”, выполняя основные предписываемые ему социальные функции, все еще не консолидирован для представления своего политического и социального заказа государству и обществу.

В армянском обществе уже сформирован широкий средний слой, составляющий 62% населения. Этот слой может стать носителем и распространителем определенной системы ценностей в случае соответствующего организованного воздействия, основываясь на формуле стабильного развития трансформирующегося общества, выдвинутой С. Хантингтоном.